«Նորմանկություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ընտանիք, ընտանիքի հոգեբանություն:

Առարկան՝ հասարակագիտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Նարինե Ասատրյան

Ուսումնական հաստատություն՝ Մ. Գալշոյանի անվ. Հ. 148 ա/դ

Երևան2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ I. ԸՆՏԱՆԻՔԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՐՄԱՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ 5
1.1. Ընտանիքը որպես երեխայի սոցիալականացման առաջնային օղակ 5
1.2.Ծնող-երեխա հարաբերությունների դերը երեխայի հասարակությանը հարմարման գործընթացում 7
ԳԼՈՒԽ II. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՐՄԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 10
Ընտանեկան ուշադրության կարևորությունը երեխայի հասարակությանըհարմարվելու գործընթացում 10
2.2. Ընտանեկան հարաբերությունների ազդեցությունը երեխայի հասարակությանը հարմարվելուն 13
2.3.Հետազոտական աշխատանք երեխայի հասարակությանը հարմարման գործընթացումընտանիքի դերի կարևորության ուսումնասիրության ուղղությամբ 16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .23
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխայի սոցիալականացման գործընթացն առաջին հերթին ընթանում է ընտանիքում՝ սոցիալական դերերի, արժեքների յուրացման և սեփական վերաբերմունքըմշակելու, անհատական առանձնահատկություններն հասկանալու միջոցով: Հետևաբար,երեխայի կյանքում ծագող խնդիրների նկատմամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմում ընտանեկան միջավայրում ձեռք բերած սոցիալական դիրքորոշումները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են երեխայի հասարակությանը հարմարման գործընթացին: Ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործոնները,ընտանիքի կառուցվածքը, ընտանեկան դերերը, հիմնական գործառույթները,ներընտանեկանհարաբերությունները կարևոր դեր և նշանակություն ունեն երեխայի հասարակությանըհարմարման գործընթացում: Ընտանիքը նաև այն սոցիալական միջավայրն է, որտեղ երեխան դրսում անցկացրած մի քանի ժամերից հետո փորձում է վերլուծել օրվա իրադարձությունները,տպավորությունները և տեղեկությունները, և այդ ամենը պայմանավորված է ներընտանեկան հարաբերությունների բնույթով,ծնողիվերաբերմունքով: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով,որ ժամանակակից աշխարհում տեղեկատվության մեծ հոսքը դժվարեցնում է ինքնուրույն կողմնորոշվելը,իսկ իրականի և երևակայականի սահմանագծին գտնվող երեխան հայտնվելով անելանելի իրավիճակում, չի կարողանում համարժեք վարքագիծ դրսևորել և կարող է հայտնվել վախի, տագնապի ոլորաններում,ունենալ խնդիրներ հասարակությանը հարմարման գործընթացում: Եվ այս ամենը գիտակցելով կարևորվում է ընտանիքի դերը երեխայի հասարակությանը հարմարման գործընթացում:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ընտանիքի դերը երեխայի հասարակությանը հարմարման գործընթացում:

Նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

դիտարկել ընտանիքը որպես երեխայի սոցիալականացման առաջնայինօղակ,

նկարագրել ծնող-երեխա հարաբերությունների դերը երեխայիհասարակությանը հարմրաման գործընթացում,

ուսումնասիրել ընտանեկան ուշադրության կարևորությունը երեխայիհասարակությանը հարմարվելու գործընթացում,

դիտարկել ընտանեկան հարաբերությունների ազդեցությունը երեխայիհասարակությանը հարմարվելուն,

հետազոտել ընտանիքի դերի ընկալումը և կարևորությունը երեխաներին ծնողների շրջանում:
Աշխատանքի իրականացման ժամանակ օգտագործվել են մասնագիտական գրականության ուսումնասիրության և սոցիոլոգիական հարցման մեթոդները:
Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, իրենց համապատասխան ենթագլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:
Առաջին գլխում,որը վերնագրված է «Ընտանիքը որպես երեխայի հասարակությանըհարմարման ինստիտուտ»,դիտարկվում է ընտանիքի առաջնային և կարևոր լինելու փաստը : Ծնող-երեխա փոխբարաբերությունները և դրանց հնարավոր ազդեցությունը երեխաների վրա հասարակությանը հարմարման գործընթացում:
Երկրորդ գլխում, որն ունի «Ընտանեկան ուշադրության դերը երեխայի հասարակությանը հարմարման գործընթացում» վերնագիրը, ներկայացված են ընտանեկան ուշադրության կարևորությունը և ընտանեկան հարաբերությունների ազդեցությունը երեխայի հասարակությանը հարմարման գործընթացում:Այս գլխում նաևներառված է հետազոտական աշխատանքը, որը իրենից ներկայացնում է երեխայի հասարակությանը հարմարման գործընթացում ընտանիքի դերի կարևորության ուսումնասիրությունը հարցաթերթերի միջոցով,դրանց վերլուծությունը և ամփոփումը:

ԳԼՈՒԽ Ի. ԸՆՏԱՆԻՔԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸՀԱՐՄԱՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

1.1. Ընտանիքը որպես երեխայի սոցիալականացման առաջնային օղակ

Յուրաքանչյուր անձի ձևավորման, ֆիզիկական և մտավոր զարգացման գործընթացում ընտանիքը, ծնողներն ունեն անփոխարինելի դեր. այս միջավայրում է տեղի ունենում երեխայի առաջնային սոցիալականացումը, ձևավորվում դերային և վարքագծային կարծրատիպերը, արժեքային կողմնորոշումներն ու աշխարհայացքը: Առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի անվտանգության, կարիքների մասին,կրթում ու դաստիարակում նրան, հոգեբանական աջակցություն ու հարմարավետությունապահովում: Հետևաբար՝ բարդույթներից զերծ, հոգեբանորեն կայուն, հասարակության պահանջներն ընկալող և դրանց համարժեք արձագանքելու ունակ անձի ձևավորման առաջնային նախադրյալը բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ու հոգեբանական և սոցիալական խնդիրները հաղթահարելու կարողություններ ունեցող, դաստիարակչականև սոցիալականացման գործառույթներ իրականացնող, երեխայի իրավունքները, նրա հանդեպ պարտականությունները գիտակցող և դրանք կյանքի կոչող ընտանիքի առկայությունն է: Ազնվությունը, մարդասիրությունը, բարությունը, կենցաղայինխնդիրներին դիմագրավելու կարողությունը ձևավորվում են միայն այն դեպքում, երբ երեխան մանկուց ականատես է եղել անկեղծ ու ջերմ մարդկային հարաբերությունների, ինչը ակնկալվում է ընտանիքում [Ковтуненко 2006: 137]: Իսկ ընտանիքում առկա սոցիալ-տնտեսական և հատկապես հոգեբանական բնույթի խնդիրները՝ ծնողների անտարբերությունը միմյանց և երեխաների նկատմամբ, ձևական բնույթ կրող՝ «հանուն երեխայի» հարաբերությունները, հաճախակի կրկնվող վիճաբանությունները, հանդուրժողականության պակասով պայմանավորված՝ «սերունդների կոնֆլիկտը», բռնությունը հանգեցնում են երեխայի հասարակությանը չհարմարմանը, անչափահասի կողմից շեղվող, իսկ առանձին դեպքերում՝ հանցավոր վարքագծի դրսևորման: Պատահական չէ, որ երեխայի իրավունքների պաշտպանությանը միտված միջազգային փաստաթղթերում ևս կարևորվում է ընտանիքի դերը: Այսպես, անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների (Պեկինյան կանոններ) 1.1 կետը սահմանում է, որ անդամ պետությունները պետք է ձգտեն նպաստելու անչափահաս տղայի կամ աղջկա և նրա ընտանիքի բարեկեցությանը [8]: Համանման կարգավորում է պարունակում նաև Անչափահասների շեղվող վարքագծի կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշների [9] : 11-րդ կետը, որը սահմանում է, որ յուրաքանչյուր հասարակություն պետք է խիստ կարևորի ընտանիքի և դրա բոլոր անդամների կարիքներն ու բարեկեցությունը: «Ռիադյան

ուղենիշերի» 12-ից 19-րդ կետերը ևս ուղղակիորեն վերաբերում են երեխայի վարքագծի ձևավորման գործընթացում ընտանիքի, ծնողների կողմից երեխայի հանդեպ դրսևորվող վերաբերմունքին՝ կարևորելով դրանք երեխայի առաջնային սոցիալականացման, պաշտպանության և խնամքի ապահովման գործընթացում: Ընտանիքը և հատկապես երեխան մեր հասարակության մեջ մշտապես դիտվել են որպես բարձրագույն արժեք: Սակայն ՀՀ-ում ընթացող ճգնաժամային երևույթները չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել նաև սոցիալական այս ինստիտուտի վրա. աղքատությունը, գործազրկությունը, արտագաղթը, ժողովրդագրական բացասական փոփոխությունները, արտագնա աշխատանքի մեկնելու հետևանքով առաջացած կիսատ ընտանիքները, արժեքային անոմիայով պայմանավորված՝ բարոյական մի շարք նորմերի անտեսումը հանգեցրինհասարակության մի մասի, հատկապես երիտասարդների շրջանում ընտանիքի ինստիտուտի արժեզրկման։
Հոգեբանության մեջ նշվում է, որ աղքատությունը, նյութական վատ պայմանները, գործազրկությունը ազդում են երեխայի սոցիալ վարքի ձևավորման վրա, սակայն դա պայմանավորված է ոչ թե նյութական միջոցների քանակով, այլ ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտում տեղ գտնող փոփոխություններով. ընտանիքում ձևավորվում է լարված մթնոլորտ, ծնողների մոտ՝ «անլիարժեքության» բարդույթ,ընկճվածություն, օտարվածություն, ֆրուստրացիա, ագրեսիվություն, որոնք էլ անդրադառնում են երեխաների վրա երբեմն՝ բռնության ձևով, փոխվում են արժեքային կողմնորոշումները, չեն ապահովվում երեխաների ֆիզիկական և հոգևոր բնականոն զարգացումը, կրթությունը: Աղքատությունը հաղթահարելու համար ծնողները մեկնում ենարտագնա աշխատանքի կամ մի քանի տեղ աշխատում, ուստի թուլանում է երեխայի նկատմամբ հսկողությունը, ինչն էլ բացասաբար է անդրադառնում երեխայի անձի ձևավորման վրա և նպաստում նրա շեղվող կամ հանցավոր վարքագծին: ՀՀ-ում գործազրկության ազդեցությունը երեխայի ասոցիալ վարքի ձևավորման առումով երկակիէ. մի կողմից՝ գործազուրկ ծնողները, հատկապես՝ մայրերը, ավելի շատ ազատ ժամանակ,հետևաբար և հնարավորություն ունեն զբաղվելու երեխայի դաստիարակությամբ, նրա կարիքների գնահատմամբ, ինչո՞ւ չէ՝ նաև ավելի լավ հսկողություն իրականացնելու, մյուս կողմից՝ գործազրկությունը ծնողի մեջ առաջացնում է արդեն իսկ վերը նշված բարոյահոգեբանական խնդիրները, որոնցից անմասն չի մնում նաև երեխան:Սակայնպետք է նշել,որ նույն խնդիրները կարող են առաջ գալ երեխայի մոտ ապահովվածությանբարձր մակարդակից նույնպես։Էստեղ նույնպես հարկ է նշել,որ կարևոր է ընտանիքի անդամների գիտակցության մակարդակը և երեխա-ծնող հարաբերությունները։Դրանց

ամուր և ճիշտ լինելու դեպքում կարող ենք խուսափել ընտանիքի սոցիալական վիճակի ազդեցությունից երեխայի վրա։[Аствацатуров 2001: 16]

1.2.Ծնող-երեխա հարաբերությունների դերը երեխայի հասարակությանըհարմարման գործընթացում
Սոցիալիզացիայի գլխավոր դերակատար համարվում է այն անձը, խումբը կամ հաստատությունները, որոնք ստեղծում են սոցիալական ենթատեքստ, որում սոցիալականացում է տեղի ունենում: Ծնողները ունեն այն ուժը,որը կարող են օգտագործել իրենց երեխաների սոցիալական հմտությունները զարգացնելու համար: Երբ երեխաներըմեծանում են՝ անցնում մանկության, պատանեկության փուլերը և դառնում երիտասարդմարդկանց հետ շփվելու և նոր ընկերներ ձեռք բերելու անհրաժեշտությունը չի դադարում:Չի դադարում անընդհատ փորձերը հասարակությանը հարմարվելու։ Լինելովերեխաների սոցիալականացման գործակալ, պետք է նրանց ամեն հնարավոր հնարավորություն ընձեռել զարգացնելու լավ սոցիալական հմտություններ, որոնք կարևոր նշանակություն ունեն կյանքի հաջող գործունեության համար:
Երբ նոր ընտանիք ենք կազմում մենք ստեղծում ենք միջավայր,որտեղ երեխաները մեզ հետ հարաբերություններ են հաստատում ու ստեղծում հնարավորինս ամուր կապ։Ընտանիքի ներսում երեխաները կարող են հուզական կապվածություն ստեղծել,որդեգրել հասարակամետ հմտություններ,հասկանալ ինչ էբարոյականությունը։Ընտանիքում երեխաները ծնողների հետ ամուր կապի միջոցով կսովորեն պահել հարաբերությունները դիմացինի հետ,լինել հանդուրժող,հասկանալ դիմացինին։Եվ այս ամենը մեծապես կօգնեն երեխային հասարակությանը հարմարվելու գործընթացում։Մինչ երեխայի անկախ դառնալը ծնողները պետք է հոգ տանեն,աջակցեն,քաջալերեն,խրատեն,սովորեցնեն,խորհուրդներով առաջնորդեն երեխաներին։Ծնողներն են համարվում երեխայի և հասարակության միջև կապ ստեղծողօղակը և այն ամուր կառուցելու համար երեխան պետք է ծնողին վստահի։Երեխան պետքէ կարողանա կիսվել ծնողի հետ,արտահայտել իր հույզերը,զգացմունքները,իսկ ծնողը պետք է լսի,փորձի հասկանալ և օգնի լուծում գտնել հակառակ դեպքում երեխան այդ ամենը կպահի իր ներսում,չի կիսվի որևէ մեկի հետ, և այդ ամենը կանրադառնա հասարակությանը հարմարման գործընթացի վրա։
Երեխաները շատ ժամանակ են անցկացնում ծնողների հետ և կարող են սովորել իրենց անհատականությունից: Ծնողների ազդեցությունը հզոր ուժ է, որը կարող է օգտագործվել երեխաների սոցիալական զարգացումը ձևավորելու համար: Տանը տիրող կարգ ու կանոնը,երեխաների ներկայության պահպանումը կարող է ազդել նրանց

սոցիալական վարքի վրա: Պետք է միշտ հաշվի առնել,որ հասարակության հարմարման գործընթացում երեխան օգտագործում է ընտանիքում իր ձեռք բերած սոցիալական հմտությունները:Եղեք այն, ինչ ցանկանում եք, որ ձեր երեխաները վերածվեն:[13]
Ընտանիքում երեխայի և ծնողի հուզական կապի ուժեղ լինելու դեպքում մի շարք խնդիրներից կարելի է խուսափել և օգնել երեխային ավելի հեշտ ինտեգրվել հասարակություն և հարմարվել դրան: Ընտանիքի հետ թույլ հուզական կապ ունեցող երեխաները ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորում, դրանցից են՝ վանդալիզմ, մանր գողություններ, խմբային կռիվների ներգրավվել, բռնի և ագրեսիվ վարքագիծդրսևորել և այլն:
Ծնող-երեխա ճիշտ հարաբերությունները երեխաներին օգնում են հեշտությամբ հարմարվել սոցիալական միջավայրին:Երեխաները ծնողներից ստանում են այնպիսի գիտելիք,հմտություններ, արժեքներ,որ անհնար է ստանալ ուրիշներից:Կարևոր է դերերիճիշտ ընկալումը:Երեխան պետք է իրեն հասկացված զգա ընտանիքում :Երեխայի կյանքում կարևորներից կարևորը ընտանիքի դերն է:Երեխայի կյանքում ամենակարևոր մարդը ծնողն է, իսկ ծնողական դեր ստանձնելը թերևս ամենաբարդերից մեկը,քանի որ պատասխանատվության մեծ բաժին է պահանջում:Ծնողի և առհասարակ ընտանիքի անդամների յուրաքանչյուր բառ,քայլ,վարքաձև,արտահայտություն կարող է ճակատագրական դեր ունենալ երեխայի ներկա և ապահա կյանքում:Կախված ծնողական մոտեցումներից և վերաբերմունքից՝ երեխան կարող է մեծանալ առողջ,երջանիկ,զվարթ,կենսախինդ,ձգտող կամ ճնշված,ագրեսիվ,վախկոտ,ներամփոփ:
Ծնող երեխա հարաբերությունները ամենանուրբ ու ազդեցիկն են մարդու կյանքում,նրանք հիմք ու մոդել են բոլոր մնացած հարաբերությունների համար:Ուստի ծնողի պատասխանատվությունն ու զգոնությունը մշտակկան են:Ծնող-երեխա հարաբերությունների որակը մեծապես կախված է ընտրված ծնողական ոճից:Հարաբերությունները մտերմիկ,ջերմ,կառուցողական կլինեն,թե ընդհակառակը՝սառը,անտարբեր,վախի վրա հիմնված,կրկին ու կրկին մեծապես կախված են ծնողի միջամտության ձևերից:[Խանամիրյան 2019: 9]
Ծնողների վերաբերմունքից է կախված ոչ միայն հոգեբանական խնդիրները այն նաև ֆիզիկակակ,առողջանակ:Երեխան չհասկացված լինելու զգացումով տառապելիս և դրսում իրեն չկարողանալ դրսևորելով կարող է ունենալ մի շարք առողջական խնդիրներ՝ թուլություն,հյուծվածություն,ախորժակի կորուստ և այլն:Ընտանիքը ահռելի դեր ունիերեխայի հասարակությանը հարմարման գործընթացում և յուրաքաչյուր ծնող պետք է հասկանա դա ապահովելով իր երեխայի հաջող կյանքը:Կյանք՝ որովհետև հասարակությանը հարմարվելը,սոցիալականացումը գործընթացներ են,որոնք ոչ թե

տևում են կյանքի ինչ-որ փուլում,այլ ողջ կյանքի ընթացքում: Երեխայի հասարակությանը հարմարման գործընթացում խնդիրներից և խոչընդոտներից խուսափելու համար անհրաժեշտ է ստեղծել մտերմիկ,ընկերական հարաբերություններ երեխաների հետ և փորձել անել ամեն հնարավորը,որ երեխան վստահի ու կիսվի ծնողի հետ: Հասարակությանը հարմարվելու գործընթացը իրապես շատ բարդ է և դրա ընթացքում շատերը փորձում են ստանձնել ծնողի դեր,եթե երեխան չունի ամուր կապ իր ծնողների հետ:Սա էլ իր հերթին կարող է խաթարել երեխայի հասարակությանը հարմարման գործընթացին և ավելի խճճել երեխային:

ԳԼՈՒԽ II. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՐՄԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

2.1. Ընտանեկան ուշադրության կարևորությունը երեխայի հասարակությանը հարմարվելու գործընթացում

Առանձին ուշադրության են արժանի ընտանեկան ուշադրությանը վերաբերող հիմնախնդիրները: Ծնողական հսկողությունը պետք է դիտարկել երեք կերպ, այն է՝
երեխան ծնողներին տեղեկացնում է, թե ովքեր են ընկերները, ինչպես է անցկացնում ազատ ժամանակը, ինչի վրա է ծախսում գրպանի գումարը: Ծնողների վերահսկողությանայս կտրվածքը թույլ է տալիս գնահատել նաև ծնողների հետ երեխայի հուզական կապի դրսևորման աստիճանը,
ծնողները տեղեկացված են, թե երեխան որտեղ, ում հետ է, ինչով է զբաղված,
ծնողները վերահսկում են, այսինքն՝ ստուգում են, թե երեխան որքանով է պատրաստվում դասերին, ինչ ֆիլմեր է նայում կամ գրքեր կարդում, պատվիրում են որոշակի ժամից չուշանալ, իսկ ուշանալու դեպքում՝ նախապես տեղեկացնել:

Իրականացված ուսումնասիրությունը վկայում է նաև, որ ՀՀ-ում, մյուս երկրների համեմատ, մեծ է այն երեխաների մասնաբաժինը (88.3 %), որոնք ծնողներին տեղեկացնում են, թե ում հետ են ժամանակ անցկացրել (Մակեդոնիայում՝ 83.7 %, Սերբիայում՝ 75.2 %, Ուկրաինայում՝ 76.9 %, Շվեյցարիայում՝ 70.4 %): Սակայն նշված դրական տարբերությունըվերանում է, երբ խոսքը վերաբերում է իրենց ժամանցի բովանդակության կամ ծախսերի ուղղվածության մասին ծնողներին տեղեկացնելուն: Մասնավորապես, հայ երեխաների
15.7 %-ը նշել է, որ ծնողներին երբեք չի տեղեկացնում, թե գումարը ինչի վրա է ծախսում (պատասխանի այդ տարբերակն է ընտրվել Կոսովոյում հարցվածների 3.9 %, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 8 %, Մակեդոնիայում՝ 10.4 %, Սերբիայում՝ 15.7 %, Ուկրաինայում՝ 15.3 %, Շվեյցարիայում՝ 16.5 %-ի կողմից): Իհարկե կարելի է ենթադրել, որ երեխաները չեն ցանկանում ծնողներին տեղեկացնել, թե գումարն ինչի վրա են ծախսում, քանի որ իրենց բավականաչափ հասուն և ինքնուրույն են համարում և այդ առումով՝ ծնողների հավանության, աջակցության կարիքը չեն զգում, սակայն շատ ավելի մեծ է հավանականությունը, որ ծնողներից նման տեղեկություն թաքցնում են նրանք, ովքեր ծնողների կողմից հավանության չարժանացող ապրանք են գնում կամ ծառայություններից օգտվում: Թերևս նույն տրամաբանությամբ է բացատրվում նաև երեխաների կողմից իրենց զբաղմունքի բովանդակությունը ծնողներից թաքցնելը:[Карабанова 2007 : 270]

ՀՀ ծնողները հիմնականում տեղեկացված են, թե տանից բացակայելիս երեխանորտեղ է գտնվում և ում հետ: Այս առումով հետազոտության մեջ ընդգրկված երկրների շրջանակում ՀՀ-ում, ինչպես նաև Կոսովոյում, գրանցվել են ամենաուժեղ հսկողության

ցուցանիշները: Մասնավորապես, ՀՀ-ում հարցված երեխաների 93.1 %, Կոսովոյում՝ 95.4 %, Մակեդոնիայում և Բոսնիա-Հերցեգովինայում՝ 91 %, Ուկրաինայում՝ 89.8 %, Սերբիայում՝ 86.7 % և Շվեյցարիայում՝ 85.8 %-ն են նշել, որ ծնողները միշտ տեղյակ են իրենց գտնվելու վայրի մասին: Համանման տվյալներ են ստացվել նաև երեխայի զբաղմունքի մասին տեղեկացվածության առումով. ՀՀ-ում, Բոսնիա-Հերցեգովինայումհարցվածների 90.4 %, Կոսովոյում՝ 89 %, Մակեդոնիայում՝ 80.8 %, Ուկրաինայում՝ 80.2 %,Սերբիայում՝ 72.4 % և Շվեյցարիայում՝ 71.4 %-ն են նշել, որ ծնողները միշտ տեղյակ են, թեիրենք ինչով են զբաղված: Սակայն երեխայի ինքնուրույնության պահանջմունքը, ծնողների հսկողությունից ազատ լինելու, անձնական տարածքի անձեռնմխելիությունը ապահովելուձգտումը իրենց արտացոլումն են գտնում երեխայի շփման անձնական շրջանակը ձևավորելու գործընթացում:[14] Պատահական չէ, որ մեր ուսումնասիրությունների համաձայն՝ ծնողական հսկողությունը նույն ազդեցությունը չի կարողանում ունենալ, երբ առնչվում ենք ընկերների այն շրջանակին, որոնց հետ երեխան տանից դուրս գտնվելիս անցկացնում է իր ժամանակը: Ի տարբերություն նախորդ ցուցանիշների՝ ՀՀ-ում ծնողական հսկողության այս տարբերակը ISRD-3 ուսումնասիրության մեջ ընդգրկված այլերկրների համեմատ առավելագույնը չէ. թեև ծնողները տեղյակ են, թե երեխաները որտեղեն, ինչով են զբաղված, սակայն ոչ միշտ են տեղեկացված,թե կոնկրետ ում հետ են նրանք այդ պահին: [Карабанова 2007: 295]: Մասնավորապես, ՀՀ-ում հարցվածների 87.5 %, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 88.8 %, Կոսովոյում՝ 91.6 %, Մակեդոնիայում՝ 87.8 %, Ուկրաինայում՝ 85.1 %, Սերբիայում՝ 83.4 % և Շվեյցարիայում՝ 81.9 %-ն են նշել, որ ծնողները միշտ տեղյակ են, թե տանից դուրս գտնվելիս իրենք ում հետ են ժամանակ անցկացնում: Ինչպես և ծնողական հսկողության նախորդ տարբերակում, երեխաներին առաջադրված հարցերը միավորվեցին, և ըստ այդմ որոշվեցին թույլ և ուժեղ հսկողությանտարբերակները, որոնք էլ վերլուծության ենթարկվեցին՝ դրանց և երեխաների շեղվող վարքագծի միջև կապը վեր հանելու նպատակով: Հսկողությունը համարվեց թույլ, եթե երեխան բացասական դիրքորոշում էր արտահայտել ծնողական հսկողության այս տարբերակի վերաբերյալ առաջադրված չորս հարցերից երեքին: ISRD-3ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ հավաստի ուժեղ կապ կա անչափահասի շեղվող, բռնի վարքագծի և նրա մասին ծնողների տեղեկացվածության միջև: Կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ հսկողության քննարկվող տարբերակիթույլ դրսևորման պարագայում ՀՀ-ում երեխաները ուժեղ հսկողության խմբիներկայացուցիչների համեմատ 2.3 անգամ ավելի հաճախ են գրաֆիտի, վանդալիզմ, մանրգողություն կատարել, ներգրավվել խմբային կռիվների մեջ 3.1 անգամ ավելի՝ բռնություն գործադրել, անձի առողջությանը վնաս պատճառել, 1.6 անգամ՝ սեփականության դեմ

ուղղված ոտնձգություններ կատարել: Առավել հետաքրքիր փոփոխություններ, սակայն, ՀՀ-ում տեղի են ունեցել ծնողների հսկողության երրորդ դրսևորման պարագայում, որը ավելի շատ ենթադրում է երեխաների վերաբերյալ ոչ թե մակերեսային տեղեկատվությանառկայություն, այլ երեխայի կյանքով, խնդիրներով իրական հետաքրքրվածություն, նրանաջակցության տրամադրում, առօրյային ակտիվ մասնակցություն: 9.1 %-ը նշել էր, որ ծնողները երբեք էլ իրապես չեն հետաքրքրվում թե նրանք որտեղ են գտնվում և ինչով ենզբաղվում: Փաստորեն ծնողները թեև տեղեկացված են լինում, թե երեխան որտեղ է և ինչով է զբաղված, սակայն իրականում, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, չեն փորձում երեխայի՝ տանից դուրս կյանքին իրապես տեղեկանալ, հասկանալ նրա հետաքրքրությունները, ձգտումներն ու խնդիրները, աջակցել նրան կյանքում առաջ 70 գնալու կամ առկա խնդիրները հաղթահարելու գործում: Մինչդեռ ծնողների՝ երեխայի կյանքին և հատկապես ընկերական միջավայրին ծանոթ լինելը էապեսնվազեցնում է երեխայի շեղվող վարքագծի դրսևորման և վիկտիմիզացիայի հավանականությունը: Ընդ որում, այդ կտրվածքով կարևոր դերակատարություն ունի նաև ծնողների կողմից երեխայի տանից դուրս գտնվելու ժամանակի սահմանափակումը: ISRD-3 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ծնողական հսկողության այս տարբերակով ևս նկատվում է որոշակի հետընթաց. 2006 թ. անցկացված ISRD-2 հետազոտության շրջանակներում ՀՀ-ում հարցված անչափահասների 90.4 %-ն էր նշել, որտանից դուրս գալիս ծնողները սահմանում են այն ժամը, երբ ինքը արդեն պետք է վերադարձած լինի։Միաժամանակ, ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում ՀՀում հարցվածների 90.7 %-ը նշել է, որ սահմանված ժամից ուշանալու դեպքում պետք է այդ մասին նախապես տեղեկացնի ծնողներին: Մինչդեռ ISRD-2 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ հենց այս ցուցանիշներն են, որ էական զսպիչ ներգործություն ունեն երեխաների կողմից հանցավոր վարքագիծ դրսևորելու վրա:

Ծնողական հսկողության տեսանկյունից առավել մեծ ուշադրություն պետք է դարձվիոչ թե ձևական, խիստ, պահանջկոտ ծնողի կերպարին համահունչ վարքագծին, այլ երեխայի կյանքով իրական հետաքրքրվածություն ունենալուն: Ծնողական հսկողություն իրականացնելու տեսանկյունից առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն, թե որքանով են ծնողները հետևում երեխայի պաշտպանությանը անձի հոգեբանական ձևավորման վրա կործանարար ազդեցություն ունեցող այնպիսի երևույթներից, ինչպիսիքեն պոռնոգրաֆիան, բռնությունը և այլն։Այսօր համացանցը վերահսկողությանբացակայության պատճառով իրական վտանգ է ներկայացնում երեխայի համար թե՛ ինքնասպանություն քարոզելու, թե՛ աղանդների կամ տարաբնույթ ենթամշակույթների, թե՛ թմրանյութերի գործածմանը կամ այլ հակաիրավական, հակաբարոյական արարքներին

ներգրավվելու, թե՛ ահաբեկչական խմբավորումների կողմից հավաքագրվելու առումով: Ուստի անհրաժեշտ է, որ ծնողները գոնե տանը երեխաների համար արգելափակեն նմանկայքերը, իսկ օրենսդրությամբ պատասխանատվություն սահմանվի ինտերնետ ակումբներում անչափահաս հաճախորդների համար նման կայքերը չարգելափակելուհամար:Երեխայի հանդեպ ուշադրությունը առավել քան երբևէ պետք է կարևորվի մեր օրերում: [Галимова 2015: 36]
Երեխայի անձի ձևավորման վրա ընտանեկան ազդեցությունը գնահատելիս կարևորագույն հարցերից մեկը ծնողների դաստիարակության մեթոդն է: Ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում շեղվող վարքագիծ առավելապես դրսևորվել է լրիվ, արտաքուստ լիարժեքհամարվող ընտանիքներում մեծացող երեխաների կողմից: Ընդ որում, որպես նման վիճակի բացատրություն, մենք ավելի հակված ենք այն տեսակետին, որ խնդիրը դաստիարակության ոլորտում է, երբ ծնողների, տատիկների ու պապիկների կողմիցերեխայի նկատմամբ չափից դուրս ուշադրությունը, նրան բոլոր տեսակի կենցաղային պարտականություններից ազատելը երեխայի մեջ ձևավորում են ամենաթողության և անպատժելիության պատկերացում: Երեխայի դաստիարակությունը վեհ, բայց նաև խիստպարտավորեցնող առաքելություն է, որը ենթադրում է դրան նախապատրաստություն, մանկավարժական, հոգեբանական գիտելիքների ու հմտությունների ձեռքբերում: Մինչդեռ ՀՀ-ում, ի տարբերություն արևմտաեվրոպական բազմաթիվ երկրների, ծնողների համար նման դասընթացներ նախատեսված չեն: [Ковтуненко 2006: 137]Հետևաբար, ծնողները երեխաներին դաստիարակում են կա՛մ իրենց ծնողների օրինակով, վերջիններիս խորհուրդներով ու ցուցումներով, կա՛մ գործում են «փորձերի ու սխալների» մեթոդով՝ մոռանալով, որ փորձարկվողը երեխա է, և իրենց յուրաքանչյուր սխալ կարող է կործանարար լինել նրա համար:

Ընտանեկան հարաբերությունների ազդեցությունը երեխայիհասարակությանը հարմարվելուն

Ընտանիքն այն սոցիալական միջավայրն է,որը կարող է փրկել և կործանել։Դա նշանակում է,որ ընտանեկան հարաբերությունները երեխայի սոցիալական միջավայրին հարմարվելու գործընթացի վրա կարող են ունենալ դրական,ինչպես նաև բացասական ազդեցություն։ Հաճախ լսում ենք այն տեսակետերը,որ ծնողը,ընտանիքը երբեք երեխայի վատը չի ցանկանա,մինչդեռ ոչ ոք չի ասել, որ կա նման ընտանիք, ով իր երեխայի համար վատ ապագա ու կործանված կյանք կուզենա տեսնել։Սակայն կա մի մեծ հարց,դա չգիտակցված,կամա թե ակամա ազդելն է երեխայի վրա։Դա մենք կարող ենք անել և

դրանով իսկ թողնել լավ կամ վատ ազդեցություն։Ընտանիքը կարող է «փրկել»։Ընտանիքում բավարար սեր,ջերմություն,հոգատարություն,հարգանք ստանալու դեպքում երեխան չի ունենա խնդիրներ հասարակությանը հարմարվելուն,և ինքն իրեն ավելորդ խնդիրներ չի ստեղծի քանի,որ նա ընտանքիում ծնողներից ստացել է այն ինչի կարիքը չունի այլևս դրսում փնտրելու։Ծնողական վերաբերմունքը կարևորվում է նաև,երբ երեխան ունի տարիքին բնորոշ որևէ վախ կամ տագնապ, ինչը կարող է անցնել, եթե ծնողնիր վերաբերմունքով ավելի շատ չամրապնդի երեխայի անհանգստությունը, տագնապն ուվախը: Հետևաբար, ողջ խնդիրը երեխայի նկատմամբ ունեցած ծնողական վերաբերմունքի մեջ է:
Ծնողը կարող է «կործանել»։Ընտանիքում չափից ավել սեր ու ջերմությունը կամ հակառակը դրա բացակայությունը կարող է պատճառ դառնալ երեխայի հասրակությանը չհարմարմանը և բազմաթիվ խնդիրների առաջ կանգնելուն։Խիստ, սկզբունքային ծնողները, որոնք երեխային զրկում են դրական, հուզական տպավորություններից, շատ հաճախ զրկում են նաև հասակակիցների հետ շփումից որի արդյունքում նման ծնողներիերեխաները տագնապի զգացում են ապրում: Չափազանց շատ խնամակալ վերաբերմունքը երեխայի մոտ ծնում է սեփական ուժերի նկատմամբ անվստահության զգացում և երեխան դառնում է խոցելի, հակված տարաբնույթ տագնապների և վախերի։Ծնողները պետք է գիտակցեն,որ երեխան դառնում է այն ինչ տեսնում է և ինչը ազդում է իր վրա։Երեխաները հեշտորեն տեսնում ու ընդօրինակում են,և հեշտորեն կրում ծնողներիարարքների ազդեցությունները։Գուցե ծնողներին թվա,որ երեխան դա չի էլ նկատում,բայցհոգեբանական մեծ ազդեցության հետևանքով և դրան ուշադրություն չդարձնելով երեխաներին ուղարկում ենք «դուրս» այն հասարակություն,որը դժվար թե ընդունի ու հասկանա երեխայի այս կամ այն պահվածքն ու վարվելաձևը,եթե ընտանիքում դա չեն արել։
Ներկայումս նկատվում է ամուսնալուծությունների աճի միտում: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ 2003-2016 թթ. ժամանակահատվածում ամուսնալուծությունների թիվը ՀՀ-ում աճել է գրեթե 2 անգամ, 2003 թ. 1000 բնակչի հաշվով ամուսնալուծությունների գործակիցը եղել է 0.6, իսկ 2016 թ.՝1.2: Ընդ որում, ամուսնալուծությունների ամենամեծ մասնաբաժինը ընկնում է ամուսնությանը հաջորդող 1-9 տարիներին (2016 թ. ամուսնալուծությունների 26.1 %-ը գրանցվել է ընտանիքի ձևավորումից 1-4 տարի, իսկ 21.5 %-ը՝ 5-9 տարի հետո)։[10]Ըստ այս տվյալների հասկանում ենք,որ կամա թե ակամա ընտանիքի դերը արժեզրկվում է,իսկդա բերում է երեխաների բնականոն կյանքի խաթարման ու հասարակության մեջ չհարմարվելու խնդիրների։Բնական է, որ ամուսնալուծությունները պետք է հանգեցնեն

կիսատ ընտանիքների առաջացմանը, որտեղ, ցավոք, ամենից շատ տուժողը երեխան է:Շատ քիչ դեպքերում է, որ ամուսնալուծությունից հետո նախկին ամուսինները, ինչպեսնաև նրանց ծնողները կարողանում են պահպանել լավ հարաբերություններ, ժամանակ առժամանակ հանդիպել միմյանց, քննարկել ընդհանուր խնդիրները և ամենակարևորը՝երեխայի համար ապահովել ծնողների՝ միջանձնային խնդիրներից զերծ ջերմ հարաբերություններ: Առավել հաճախ երեխան պարզապես դառնում է նրանցեսասիրական մղումների զոհը, վերածվում միմյանց ցավ պատճառելու, նախկին ամուսնուկամ կնոջ նկատմամբ իշխանության հասնելու «խաղաթղթի»: Կիսատ ընտանիքներումդաստիարակվող երեխաների շարքին են դասվում նաև նրանք, ում ծնողները՝ մայրը կամհայրը, մեկնել են արտագնա աշխատանքի, կամ ովքեր դաստիարակվում են այրիացածկամ միայնակ ծնողի կողմից: Առանձին փորձագիտական գնահատականների համաձայն՝ ՀՀ-ում միայն 2014 թ. 125000 կին ունեցել են միայնակ մոր կարգավիճակ, և այդ թիվըգնալով աճում է :[11] Իսկ դրանից ավելում են հասարակության մեջ հարմարվելուխնդիրներ ունեցող երեխաների թիվը, և անորոշ է դառնում նրանց հետագա կյանքը: Նաև կան բազմաթիվ կրիմինալոգիոկան ուսումնասիրություններ,ըստ որոնց հանցավորկամ շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասների շրջանում, ի համեմատ նմանվարքագիծ չդրսևորած նրանց հասակակիցների, ավելի հաճախ են հանդիպում կիսատընտանիքներում ապրողները:[Գաբուզյան 2010: 27]Սակայն կա նաև հակառակփաստարկները, որ նման երեխաները մեծամասամբ լինում են լրիվ ընտանիքունեցողները:Սրանից կարող ենք հետևություն անել,որ ավելի ճիշտ կլինի շեշտադրումկատարել ոչ թե ընտանիքի կիսատ կամ լրիվ, այլ դրա բարեկեցիկ լինելու, երեխայի հետհուզական ջերմ հարաբերություններ ունենալու, նրան աջակցելու, հարմարավետությունու երջանկություն ապահովելու վրա: Երեխաների և ծնողների միջև հուզական ջերմհարաբերություններն են, որ երեխաների մեջ ձևավորում են երջանկության նմանընկալում՝ դրանով իսկ նրանց նկատմամբ նվազեցնելով հասարակությունում առկաբազմաթիվ գործոնների, այդ թվում՝ սոցիալտնտեսական ծանր վիճակի բացասականազդեցությունը:Ամուր ընտանիքն է,որ կարող է հիմք դառնալ երեխայի հասարակությանըհեշտ հարմարման գործընթացին:

2.3. Հետազոտական աշխատանք երեխայի հասարակությանը հարմարմանգործընթացում ընտանիքի դերի ուսումնասիրության ուղղությամբ

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել ընտանիքի դերի՝ ընտանեկան միջավայրի, ներընտանեկան փոխհարաբերությունների, ծնողական վերաբերմունքի ազդեցությունը երեխայի հասարակությանը հարմարվելու գործընթացում: Բացահայտել ծնող-երեխա կապի ամրությունը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

սոցիոլոգիական հարցում,

մաթեմատիկական մեթոդ:

Հարցումը իրականացվել է վեցից տասն ութ տարեկան երեխաների շրջանում և նրանց ընտանիքների:Հարցմանը մասնակցել են 24 երեխա և 24 ծնող:

Հետազոտության աշատանքի վերլուծություն.

Երեխաների հետ անցկացրած հետազոտություն տվյալների ուսումնասիրությունից պարզ դարձավ երեխայի վերաբերմունքը ծնողի դերի հանդեպ:Հասկանալի դարձավ երեխայի հասարակությանը հարմարմարման գործընթացի ու ծնողի դերի փոխկապակցվածությունը: Ծնողների հետ անցկացրած հետազոտության տվյալների ուսումնասիրությունից պարզ դարձավ թե որքանով են կարևորում իրենց դերը երեխայի հասարակությանը հրամարման գործընթացում:

Հարցում երեխաների շրջանում.

Գծապատկեր 1



Հարցման մասնակիցների 58,3%-ի մոտ տան մթնոլորտը լավ է,այսինքն դրական:Երեխաները զգում են ծնող-երեխա հուզական կապը,ծնողների հարաբերությունները չեն ազդում երեխաների վրա և դա նպաստում է երեխաների հասարակությանը հարմարման գործընթացին:

Գծապատկեր 2



Հարցվողների մեծամասնությունը կարևորել է ծնողների դերը հասարակությանը հարմարվելու իրենց գործընթացին։33,3%-ը շատ մեծ կարևորություն է տվել ընտանիքի դերին հասարակությանը հարմարվելու գործընթացում։ 62,5% -ը պատասխանել է այո՝ բավարար գնահատելով ծնողի դերի կարևորությունը երեխայի սոցիալական միջավայրին հարմարվելու գործընթացում։

Գծապատկեր 3



Երեխաների մեծ մասը ազատ են զգում տանը,և բարեբախտաբար միայն 16,7%-ն է,որվախենում է ազատ խոսել,կիսվել ընտանիքի անդամների հետ։Իսկ այն երեխաները,որ ճնշված են զգում տանը վկայում է ծնող-երեխա հարաբերությունների թույլ լենելը։

Գծապատկեր 4



54,2%-ը ունի որոշակի խնդիրներ,բայց ընտանիքի օգնությամբ փորձում է հարմարվել հասարակությանը։33,3%-ը հեշտ է հարմարվում հասարակությանը,որովհետև ունի ամուրկապ ծնողների հետ, և ընտանիքն ամեն ինչ անում է,որպեսզի հեշտացնի երեխայի հասարակությանը հարմարման գործընթացը։

Գծապատկեր 5



Մեծամասնությունը նշել է, որ ընտանեկան վիճակը ազդում է իրենց սոցիալ- հոգեբանական վիճակի վրա։ Միայն հարցվածների 28,8%-ն է պնդում,որ ընտանեկան վիճակը ազդեցություն չի ունենում իրենց վրա։

Գծապատկեր 6



Տվյալ ցուցանիշները ցույց են տալիս,որ ծնողի դերը կարևորվում է ընտանիքում,և ծնողը գիտակցում է իր դերը։Երեխաների մեծ մասը նշել են,որ երբեմն են ծնողի կողմից աջակցություն ստանում։Միայն 16,7%-ն է նշել,որ ծնողները չեն լսում և չեն օգնում։

Հարցում ծնողների շրջանում
Գծապատկեր 1



Ծնողների 75%-ը մեծ կարևորություն են տվել երեխայի հասարակությանը հարմարման գործընթացում իրենց դերը։Ընդամենը 8.3%-ն է անկարևոր համարել իր դերը որպես ծնող։

Գծապատկեր 2



Ծնողների 83.3%-ը ընտանիքը համարել է երեխայի համար առաջին ու ամենակարևորսոցիալական միջավայրը,իսկ 12.5%-ը կարծում է,որ կա ավելի կարևոր սոցիալական միջավայր,որը նպաստում է երեխայի հասարակության հարմարման գործընթացին:

Գծապատկեր 3



Հարցման մասնակիցների 75%-ը կարծում է,որ իր երեխան հասարակությանը հարմարման խնդիր չունի,և երեխայի սոցիալականացումը լավ է ընթանում:Շատ փոքր մաս է կազմում այն ծնողների թիվը,ովքեր գտնում են,որ իրենց երեխան շուտ չի հարմարվում միջավայրին կամ այդքան էլ հեշտ չի ընթանում:

Գծապատկեր 4



Այն հարցին թե արդյոք իրենց երեխաները հասարակության մեջ հարմարման խնդիր չունեն և չեն էլ ունենա մեծ մասը չի կարողացել հստակ պատասխանել,որը գալիս է երեխայի հետ ոչ շատ ամուր կապ ունենալուց և ազատ շփում չստեղծելուց:

Գծապատկեր 5



Ծնողների մեծամասնությունը ուժեղ է համարում երեխաների հետ իրենց կապը:Միայն 12,5%-ն է գտնում,որ իրենցց ծնող-երեխա կապը թույլ է ընտանիքում:

Գծապատկեր 6



Ծնողների գերակշիռ մասը համարում է,որ իրենց ընանիքի մթնոլորտը դրական է ազդում երեխայի սոցիալ-հոգեբանական վիճակի վրա ,և միայն 25%-ը չի կարողացել հստակ պատասխան տալ հարցին։

Այսպիսով,ծնողների և երեխաների շրջանում «Ընտանիքի դերը երեխայի հասրակությանը հարմարման գործընթացում» թեմայով անցկացրած հետազոտական աշխատանքի ուսումնասիրությունը ցույց տվեց,որ և՛ ծնողների,և՛ երեխաների կողմից ծնող-երեխա կապը գնալով ավելի է կարևորվում որպես խթան երեխաներիհասարակությանը հարմարմանը։Ըստ հետազոտության հաստատվեց ևս մեկ անգամ,որ ընտանիքը ամենակարևոր և առաջնային սոցիալական միջավայրն է,որը պատրաստում էերեխային հասարակության մեջ շուտ ադապտացմանը ու կյանքի հետագա փուլերում խնդիրներից խուսափմանը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատելով տվյալ թեմայի շուրջ՝ եկանք հետևյալ եզրահանգումների.

Ընտանիքը որպես երեխայի սոցիալականացման առաջնային օղակ մեծդեր ու նշանակություն ունի երեխայի կյանքի տարբեր փուլերում,որովհետև սոցիալականացումը տեղի է ունենում ամբողջ կյանքի ընթացքում։

Ծնող-երեխա ճիշտ հարաբերություններն են,որ օգնում են երեխային արագ ու հեշտ հարմարվել հասարակությանը։Ընտանիքում երեխաները ծնողների հետ ամուր կապի միջոցով կսովորեն պահել հարաբերությունները դիմացինի հետ,լինել հանդուրժող,հասկանալ դիմացինին։

Ծնողի ուշադրությունը կարևոր գործոն է երեխայի սոցիալական միջավայրի հարմարման գործընթացում։Այն կարող է ունենալ և՛դրական, և՛ բացասական ազդեցություն։

Ընտանիքում ծնողների հարաբերությունները մեծապես ազդում են երեխայի սոցիալ-հոգեբանական վիճակի վրա և հասարակությանը հարմարման գործընթացի։

Հետազոտությունը ևս մեկ անգամ ապացուցեց ընտանիքի դերի կարևորությունը երեխայի հասարակությանը հարմարմանգործընթացում և դրա կարևորության մեծացմանանհրաժեշտությունը։Ընտանիքը պետք է զգա իր դերի կարևորությունը մի քանի պարզ պատճառով.

1. Ընտանիքը ծառայում է կարևոր ռեսուրս երեխայի զարգացման,ինքնաճանաչման,ինքնադրսևորման,հասարակությանը հարմար փուլերում,
2. հասարակությունը ընդունում է նրան,ով ինքն իրեն է առաջին հերթինճանաչում ու ընդունում որպես այդ հասարակության մի մասնիկ,իսկ երեխայի ինքնաճանաչման առաջին փուլը տեղի է ունենում ընտանիքում,
3. ինչքան ամուր է ծնող-երեխա կապը,այնքան հեշտ է տեղի ունենում երեխայի հասարակությանը հարմարման գործընթացը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գաբուզյան Ա.,Անչափահասների հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2010 :
Խանամիրյան Ի. , Գիտակից ծնող,ներդաշնակ երեխա, Երևան 2019:
Ղույումչյան Գ. Ե., Մանկավարժություն , Երևան 2005:
Аствацатуров С. Безработные: проблемы и решения // Меняющееся общество, Ереван 2001
Галимова А. А. Влияние сети интернет и иных средств массовой информации на преступность несовершеннолетних // «Современность в творчестве талантливой молодежи». Сборник материалов научно-практической конференции молодых ученых / Москва 2015
Карабанова О. А. Дисгармоничность детско-родительских отношений как факторриска девиантного поведения личности / Москва 2007
Ковтуненко Л. В. ,Семья как социокультурная среда воспитания и ресоциализации несовершеннолетних правонарушителей / Воронеж 2006
Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ,Պեկինյան կանոններ// https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18505 , 12.03.2021;14:00
Անչափահասների շեղվող վարքագծի կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշներ,Ռիադյան ուղենիշներ/ http://ysu.am/files/book_Anna_Margaryan.pdf ,12.03.2021;15:00
Հայաստանի Հանրապետության բնակչության վիճակագրական տարեգիրք/ https://armstat.am/am/?nid=586&year=2020 , 12.03.2021;15:30
Հայաստանում ավելացել է միայնակ կանանց թիվը// https://www.aysor.am/am/news/2014/05/14/aharon-adibekyan/789666 , 12.03.2021; 16:00
Importance of the family context/ https://link.springer.com/chapter/10.1007/0-306- 48572-9_11 ,20.04.2021;19:00
Socialization//https://www.all4kids.org/news/blog/the-role-of-family-in-child-development/#:~:text=What%20your%20child%20learns%20through,comfort%20with%20others%20as%20well, 20.04.2021;19:45
Why are parents such a powerful agent of socialization// https://www.education.gov.gy/web/index.php/parenting-tips/item/1752-why-are- parents-such-a-powerful-agent-of-socialization#:~:text=Parents%20have%20the%20power%20to,by%20nurturing%20th

eir%20social%20skills.&text=You%2C%20being%20an%20agent%20of,to%20successful%20functioning%20in%20life., 01.05.2021;22:10